ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«13» մայիսի 2019 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Ասատրյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 22 (քսաներկու) անդամներ՝

Ս.Բալասանյանը, Լ.Խաչատրյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյանը, Վ.Եդիգարյանը, Ա.Գրիգորյանը, Գ.Սարգսյանը, Գ.Գրիգորյանը, Կ.Թաթարյանը, Ս.Աստոյանը, Ա.Խաչատրյանը, Ա.Աղանյան, Ռ.Սարգսյանը, Ա.Մխիթարյանը, Ս.Մարտիրոսյան, Լ.Բարսեղյանը, Ք. Մկրտչյանը, Ա. Գրիգորյանը, Գ.Մաթևոսյանը, Ա.Ղարաղազարյանը, Հ.Պողոսյանը, Ա. Առաքելյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ.Ասատրյանը:

Նիստին հրավիրված են և մասնակցում են՝ համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետերը, «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի տնօրենի ժ/պ Վ. Սամսոնյանը, ««Կումայրի» արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Ի. Ավագյանը, ինչպես նաև ՁԼՄ-ների և ՀԿ-ների ներկայացուցիչներ:

ԼՍԵՑԻՆ.

1. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 13-ի վեցերորդ նստաշրջանի հերթական չորրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 210-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 210-Ն որոշման(այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1–ին կետի 1-ին ենթակետի «3 622 896 300 (երեք միլիարդ վեց հարյուր քսաներկու միլիոն ութ հարյուր իննսունվեց հազար երեք հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «3 623 003 000 (երեք միլիարդ վեց հարյուր քսաներեք միլիոն երեք հազար)» թվով և բառերով,

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «3 962 202 000 (երեք միլիարդ ինը հարյուր վաթսուներկու միլիոն երկու հարյուր երկու հազար)» թիվը և բառերը փոխարինել «3 962 308 700 (երեք միլիարդ ինը հարյուր վաթսուներկու միլիոն երեք հարյուր ութ հազար յոթ հարյուր) » թվով և բառերով:

2. Բյուջեի հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համապատասխանաբար՝ NN 1,2,3,4 հավելվածների:

3.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել համապատասխան փոփոխությունները՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 69 267 300 (ՎԱԹՍՈՒՆԻՆԸ ՄԻԼԻՈՆ ԵՐԿՈՒ ՀԱՐՅՈՒՐ ՎԱԹՍՈՒՆՅՈԹ ՀԱԶԱՐ ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԸ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի (այսուհետ՝ բյուջե) վարչական մասի պահուստային ֆոնդի 2-րդ եռամսյակի նախատեսված 69 267 300 (վաթսունինը միլիոն երկու հարյուր վաթսունյոթ հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամն ուղղել բյուջեի ֆոնդային մաս:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել սույն որոշման 1-ին կետերում նշված փոփոխությունը՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ՀԱԿՈԲ ԲԱԼՈՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հակոբ Բալոյանին հատկացնել 100 000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ՖԼՈՐԱ ԻԳԻԹՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ֆլորա Իգիթյանին հատկացնել 330 000 (երեք հարյուր երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 145 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՀԻՆԳ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 21
դեմ – 0
ձեռնպահ – 0

Գյումրի համայնքի ավագանու անդամ Քրիստինա Մկրտչյանը չի մասնակցել քվեարկությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թվով 145 (մեկ հարյուր քառասունհինգ) անձանց կանխիկ հատկացնել 1 550 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 20
դեմ – 1
ձեռնպահ – 1

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 21
դեմ – 0
ձեռնպահ – 1

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և հաստատել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՂԱՐՍԻ ԽՃՈՒՂԻ N 2/12 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 21
դեմ – 0
ձեռնպահ – 1

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 02112018-08-0028) Ղարսի խճուղի N 2/12 հասցեի 0,4141 (զրո ամբողջ չորս հազար հարյուր քառասունմեկ տասհազարերորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-0236-0114) մրցույթով կառուցապատման իրավունքով 99 (իննսունինը) տարի ժամկետով՝ տրամադրել օգտագործման հանգստի գոտի կազմակերպելու նպատակով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 21 000 (քսանմեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12 -Ի N 99-Ա ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿԻ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Դադարեցնել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ղարսի խճուղի N 6/4 հասցեի 4,56721 (չորս ամբողջ հիսունվեց հազար յոթ հարյուր քսանմեկ հարյուրհազար երորդական) հեկտար մակերեսով հողամասից Ղարսի խճուղի N 6/7 հասցեի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27032019-08-0033) 0.4141 (զրո ամբողջ չորս հազար հարյուր քառասունմեկ տասհազարերորդական) հեկտար մակերեսով առանձնացված հողամասի մասով որոշման գործողությունը և հետ վերցնել հողամասը՝ համայնքի կարիքների համար օգտագործելու նպատակով:
2. Մնացած 4,15311 (չորս ամբողջ տասնհինգ հազար երեք հարյուր տասնմեկ հարյուրհազա-ներորդական) հեկտար մակերեսով հողամասի տարեկան վարձավճարը սահմանել 207656 (երկու հարյուր յոթ հազար վեց հարյուր հիսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 115-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 3

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի «Աճուրդով օտարելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու, աճուրդային մեկնարկային գներ և պայմաններ հաստատելու մասին» N 115-Ա որոշմամբ հաստատված հավելվածի (այսուհետ՝ հավելված) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) հավելվածի 5-րդ կետի որոշման 4-րդ սյունակի «խառը» բառը փոխարինել «բնակելի» բառով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 100-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԸ ԵՎ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ N 76/6 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՆ

ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N11 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 100-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետը և Մուսայելյան փողոց N 76/6 հասցեի հողամասն աճուրդով վաճառելու մասին 2017 թվականի հոկտեմբերի 20-ի N 11 արձանագրությունը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ի № 183-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ԹՈՎՄԱՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 06-ի №131-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 183-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ հաստատված №18 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունիսի 03-ից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

14. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ՍՈՒԼԹԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրին մասնակցելու համար դիմել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին Գյումրի համայնքի «Սուրբ Մարիամ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի կառուցման առաջնահերթ խնդրով:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կրթության բաժնի պետին՝ սահմանված ժամկետում պատրաստել և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին ներկայացնել համապատասխան հայտ՝ ծրագրին մասնակցելու վերաբերյալ:
3 .Հայտի հաստատման դեպքում կատարել 10% ներդրում՝ Սոցիալական ներդրումների տեղական զարգացման ծրագրի պահանջներին համապատասխան:
4. Ծրագրի իրականացման դեպքում վերականգնված ենթակառուցվածքի շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջեում:
5. Վերականգնված ենթակառուցվածքը չօտարել, չսեփականաշնորհել կամ չօգտագործել այլ նպատակներով՝ ծրագրի ավարտից հետո 15 տարվա ընթացքում:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ «ԶԻԼ» ՄԱԿՆԻՇԻ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՆՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻՑ՝ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՁԵՎՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թույլատրել իրականացնել թվով երկու «Զիլ» մակնիշի մեքենաների գնումը երկրորդական շուկայից՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:
2. Այդ նպատակով հատկացնել 4.400.000 (չորս միլիոն չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 5/1/1 գործառական դասակարգման (5129) «Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:
4. Գնված տեխնիկաները ձևակերպել համայնքի հաշվեկշռում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի № 205-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի №205-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԵՏԵՅ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Վավերացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի և Ֆրանսիայի Հանրապետության Կրետեյ քաղաքների միջև կնքված համագործակցության պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԵՏԵՅ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏ ՈՃԻ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՋՐԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՈՒ ՎԱՐԱԿԱԶԵՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Վավերացնել Գյումրի համայնքի ազատ ոճի ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոցի ջրային ցանցի վերանորոգման ու վարակազերծման աշխատանքների և ջեռուցման համակարգի տեղադրման պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական հինգերորդ նիստի գումարման օր սահմանել 2019

թվականի հունիսի 12-ը ժամը 12^{00}-ն:

Որոշումն ընդունվեց

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անդամներ

Ս. Բալասանյան _____

Լ. Խաչատրյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Գ. Սարգսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

Ս. Աստոյան _____

Ա. Խաչատրյան _____

Ա. Աղանյան _____

Ռ. Սարգսյան _____

Ա. Մխիթարյան _____

Ս. Մարտիրոսյան _____

Լ. Բարսեղյան _____

Ք. Մկրտչյան _____

Ա. Գրիգորյան _____

Ա. Ղարաղազարյան _____

Հ. Պողոսյան _____

Ա. Առաքելյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«13» մայիսի 2019թ.